

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

1

Երեքշաբթի
Tuesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Կոմիտասի մասին Տիգրանյանի հուշերը շատ բան են պատմում Կոմիտասի և իր բարեկամության մասին: Նրանք շատ էին քննարկում հայկական ժողովրդական երաժշտության ոճերն ու ձևերը: Տիգրանյանի հետ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ Կոմիտասն ասում էր. «Եկել եմ՝ օգտվեմ Նիկողայոս Տիգրանյանի երաժշտական գանձարանից»:

Tigranyan’s memoirs about Komitas reveal much about both the great composer and their deep friendship. The two often discussed the styles and forms of Armenian folk music. At every meeting, Komitas would say, “I have come to draw from the musical treasury of Nikoghayos Tigranyan.”

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

2

Չորեքշաբթի
Wednesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Հայաստանում հագուստը տարածաշրջանային առանձնահատկություններ ուներ: Ալեքսանդրապոլի տարազը նույնն է, ինչ Բարձր Հայքի (Էրզրումի) տարազը: Հագուստի վրա ազդեցություն են թողել Արևմտյան Հայաստանի քաղաքներին բնորոշ հագուստները, քանի որ ռուս-թուրքական պատերազմից հետո շատերն այնտեղից տեղափոխվել են Ալեքսանդրապոլ: Նրանց հագուկապում գերակշռում էին կապույտը և մանուշակագույնը, կանանց հագուստը զարդարված էր ասեղնագործ նախշերով, որոնց համար օգտագործում էին մետաքսե թելեր, ուլունքներ, փղորիկ խեցիներ, նույնիսկ ձկան թեփուկներ:

Traditional clothing in Armenia varied by region. The costume of Alexandrapol was similar to that of Upper Armenia (Erzurum). Local dress was influenced by the styles of Western Armenian cities, as many people resettled in Alexandrapol after the Russo-Turkish War. Blue and purple were the dominant colors, and women’s garments were richly adorned with intricate embroidery made from silk threads, beads, small shells, and even fish scales.




Ալեքսանդրապոլցու ամենօրյա հագուկապը
Traditional dress of Alexandrapol residents

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

3

Յինգշաբթի
Thursday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Օնիկ Կարապետյանի առաջին ստեղծագործությունը՝ «Գարնանամուտը», այնքան տպավորիչ էր, որ նորավեպի հայտնի հեղինակ Ատրպետը երիտասարդին տվեց «Շիրազ» գրական կեղծանունը՝ նրա պոեզիան համեմատելով պարսից Շիրազ քաղաքի վարդերի հետ:

Onik Karapetyan’s first work, “Spring Entrance,” made such a strong impression that the renowned writer Atrpet gave the young poet the pseudonym “Shiraz,” likening his verses to the roses of the Persian city of Shiraz.

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

4

Ուրբաթ
Friday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Հայ գրականության դասական, բանաստեղծ Հովհաննես Շիրազը ծնվել է Ալեքսանդրապոլում, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Հովհաննեսը մեծացել է որբանոցում։ Քաղցած երեխաները շուկա էին վազում և որևէ բան թռցնում անցնող-դարձողից։ Մի օր տղան մի կնոջից գողանում է նրա դրամապանակն ու տեղում բռնվում։ Սակայն հրաշք է կատարվում։ Կինը ծանաչում է իր կորած որդուն։ Այդպիսով, Շիրազը վերագտնում է մորը և հետագայում նրան է նվիրում իր ամենահուզիչ բանաստեղծությունները։

The classic of Armenian literature, poet Hovhannes Shiraz, was born in Alexandrapol during World War I. He grew up in an orphanage, where hungry children often ran to the market and stole whatever they could from passersby. One day, young Hovhannes was caught stealing a woman's wallet. Yet a miracle occurred: the woman recognized her long-lost son. In this way, Shiraz was reunited with his mother, to whom he would later dedicate some of his most touching poems.

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

5

Շաբաթ
Saturday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Հ. Զարդարյան, 1956
H. Zardaryan, 1956



...Զքնաղ է թվում աչքիս ամեն բան,
Ու կուզեմ կրծքիս սեղմել կյանքը ողջ,—
— Օ, սիրտ իմ, այս է խորհուրդը գարնան,
Այս է աշխարհը միշտ պահում բողբոջ...
Հովհաննես Շիրազ

...Everything seems beautiful to my eyes,
And I long to hold life close to my heart—
Oh, my soul, this is the secret of spring,
This is how the world forever keeps a bud...
Hovhannes Shiraz

ՍԵՊՏԵՄԲԵՐ

SEPTEMBER

6

Կիրակի
Sunday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
--------	--------	--------	--------	---------	--------	--------

1 2 3 4 5 6

7 8 9 10 11 12 13

14 15 16 17 18 19 20

21 22 23 24 25 26 27

28 29 30

Քանաստեղծ Ռոմիկ Սարգսյանը
(աջից՝ երկրորդը)՝ նկարիչ ու բանաստեղծ
ընկերների հետ

Poet Romik Sardaryan (second from right)
with artist and poet friends



Մի օր մի սրճարանում, որտեղ արվեստագետներ էին հավաքվել, պոեզիայի մրցույթ է անցկացվում։ Ընտրում են երկու թեկնածուի՝ արդեն հայտնի բանաստեղծ Շիրազին և սկսնակ Ռոմիկ Սարգսյանին։ Շիրազը դժգոհ դեմքով մի բանաստեղծություն է կարդում, զայրացած նայում է Սարգսյանին ու նստում։ Սարգսյանը կանգնում է և արտասանում Շիրազի բանաստեղծությունը։ Շիրազի սիրտը փափկում է. «Ծ՛ռ, դու լավ էլ գլուխ ես հանում պոեզիայից»։

One day, in a café where artists often gathered, a poetry contest was held. Two participants were chosen: the already famous poet Shiraz and the young newcomer, Romik Sardaryan. Shiraz read his poem with a displeased expression, shot a sharp glance at Sardaryan, and sat down. Then Sardaryan stood and recited Shiraz's poem flawlessly. Shiraz's heart softened: "Kid, you've got talent."

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

7

Երկուշաբթի
Monday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Չայ գրականության դասական
Հովհաննես Շիրազը և համաշխարհային
գրականության դասական Վիլյամ
Սարոյանը

Armenian literature classic Hovhannes Shiraz
and world literature classic William Saroyan



«Շիրազը թանկ հոգի է... Նա տաղանդ է, մենք պետք
է հպարտանանք նրանով և նրան ծանաչելը պատիվ
համարենք»:
Վիլյամ Սարոյան

"Shiraz is a precious soul... He is a talent, we
should be proud of him and consider it an honor
to know him."
William Saroyan

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

8


Երեքշաբթի
Tuesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Ֆելիքս Գյուլանյան «Փայտոն Ալեք»
Felix Gyulanyan "Phaeton Alek"
1982

Մինչև 1970-ականները
ֆայտոնը քաղաքում սովորական
տրանսպորտային միջոց էր, գլխարկը՝
պատվի և հպարտության խորհրդանիշ։
Հետևաբար «իսկական» գյումրեցին
ընկերների հետ քեֆ անելուց հետո
տուն էր վերադառնում երկու ֆայտոնով.
մեկը՝ իր համար, մյուսը՝ գլխարկի։

Until the 1970s, phaetons were a
common means of transportation
in the city, and wearing a hat was
a symbol of honor and pride. After
an evening out with friends, a "true
Gyumri resident" would return home
in two phaetons: one for himself, and
the other for his hat.



ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

9

Չորեքշաբթի
Wednesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



1925-ի աշնանը Չարենցը գնաց Ալեքսանդրապոլի մի որբանոց, որտեղ նրան բուռն ընդունելության արժանացրին: Երբ նա դասախոսությունը կարդաց, բեմ բարձրացրին 15-ամյա Խաչիկ Դաշտենցին: «Ինձ պատմել են քո մասին: Ես ուզում եմ կարդալ քո բանաստեղծությունները»,– տղային ասաց Չարենցը: «Ամեն ինչ այնքան արագ կատարվեց, որ ես կարմրեցի ու փախա բեմից»,– հիշում է Դաշտենցը:

In the fall of 1925, Charents visited an orphanage in Alexandrapol, where he received a warm and enthusiastic welcome. He gave a lecture and, upon finishing, was introduced to 15-year-old Khachik Dashtents. "I've heard about you. I want to hear your poems," Charents said to the boy. "Everything happened so quickly that I blushed and ran off the stage," Dashtents later recalled.

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER


10

Յինգշաբթի
Thursday

Ե M	Ե T	Չ W	Յ T	Ու F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Խաչիկ Դաշտենցի ձեռագիրը,
Շեքսպիրի «Հենրի IV» ողբերգության
թարգմանությունը

Khachik Dashtents' manuscript: translation of
Shakespeare's tragedy "Henry IV"



Խաչիկ Դաշտենցը 1936-ին մեկնում է Մոսկվա և ընդունվում օտար լեզուների ինստիտուտ: Անգլերեն սովորելուց հետո զբաղվում է թարգմանություններով: Հուտով հարց է ծագում՝ ինչ թարգմանել: Օգնության է հասնում Յայաստանի գրողների միության նախագահ Ավետիք Իսահակյանը և խորհուրդ տալիս Շեքսպիր թարգմանել: Դաշտենցը նվիրվում է թարգմանությանը՝ այն դարձնելով իր ամբողջ կյանքի գործը:



Khachik Dashtents left for Moscow in 1936 and entered the Institute of Foreign Languages. After studying English, he began translating. Soon the question arose: what to translate? Avetik Isahakyan, the president of the Writers' Union of Armenia, came to his aid and advised him to translate Shakespeare. Dashtents devoted himself to translation, making it his life's work.

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

11

Ուրբաթ
Friday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Հայկական գամփռ կամ գելխեղդ ցեղատեսակը գոյություն ունի ավելի քան 2000 տարի: Առաջին հիշատակումը թվագրվում է մ. թ. ա. 1-ին դարով և վերագրվում է Տիգրան Մեծի զորքին: Գամփռները գերազանց պահապաններ են, որոշները կարող են կոտրել ձիու վերջույթները: Հայկական գամփռները երկաթե կամք ունեն և աներևակայելիորեն հավատարիմ են մարդկանց: Գամփռի հայրենիքը համարվում է Հիւրակը:

The Armenian Gampr or Gelkhegd breed has existed for more than 2000 years. The first mention dates back to the 1st century BC and is attributed to the army of Tigran the Great. Gampr are excellent guards, some can break the limbs of a horse. Armenian Gampr have an iron will and are incredibly loyal to people. The homeland of the Gampr is considered to be Shirak.

Բրոնզե դարի արձանիկներ Այրումից,
Հայաստան
Bronze Age figurines from Ayrum, Armenia

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

12

Շաբաթ
Saturday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Գյումրիում այսօր էլ կարելի է մտնել 1941-ից գործող վարսավիրանոց, որն ամենահինն է Հայաստանում: Բացումից ի վեր նորոգվել է երկու անգամ: Սրահում թևածում է հին Լենինականի ոգին: Պահպանվել է երեխաների աթոռակը (1955): Սրահում իրենց մազերն են հարդարել Ավետիք Իսահակյանը, Միեր Սկրտչյանը, Յովհաննես Շիրազը:

In Gyumri, you can still visit a barbershop that has been in operation since 1941, making it the oldest in Armenia. The salon has been renovated twice since its opening, yet it still exudes the charm of old Leninakan. A vintage children's stool from 1955 has been preserved. Notable figures such as Avetik Isahakyan, Mher Mkrtchyan, and Hovhannes Shiraz have all had their hair styled in this historic salon.

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

13

Կիրակի
Sunday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
1	2	3	4	5	6	
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Ալեքսանդրապոլ-Գյումրիում բաղնիք գնալը պարտադիր ծես էր։ Առավել հայտնի էին Կենտրոնական, Գևորգ աղայի, Մարտին աղայի, Յունական և Զիթողյանների բաղնիքները։ Մարդիկ հատուկ «բոխչա» էին կապում, որի մեջ սպիտակեղեն, լոգանքի պարագաներ և սամովար էին դնում։

In Alexandrapol-Gyumri, going to the bathhouse was a mandatory ritual in ancient times. The most famous were the Central, Gevorg Agha, Martin Agha, Hunakan, and Dzitoghtsyan baths. People would tie a special “bokhcha” into which they would put linen, toiletries, and a samovar.

Տեր-Մարտիրոսովի բաղնիքը
(Կենտրոնական), 19-րդ դար, Աբովյան 133
Ter-Martirosov Bathhouse (Central), 19th
century, Abovyan 133

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

14

Երկուշաբթի
Monday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
--------	--------	--------	--------	---------	--------	--------

1 2 3 4 5 6

7 8 9 10 11 12 13

14 15 16 17 18 19 20

21 22 23 24 25 26 27

28 29 30

«Բաղնիքային» հարսանիք Լենինականում

"Bathroom" wedding in Leninakan



Յնուց ի վեր Գյումրիում այսպիսի ավանդույթ է եղել. հարսանիքից մեկ օր առաջ երկու կողմերի հարազատներն ուտելիքի կապոցներ էին վերցնում, երաժիշտների, երգ ու պարի ուղեկցությամբ հարսին ու փեսային բաղնիք էին տանում: Բաղնիքը հարսնատեսի արարողությանը մասնակցելու համար իղեպական վայր էր: Ըստ ավանդույթի՝ բաղնիքից հետո գյումրեցի հարսը պիտի սկեսուրի ուսերին սրբիչ գցեր, համբուրեր նրան և ասեր. «Բաղնիքդ անուշ, մամա ջան»:

Since ancient times, a unique tradition has been observed in Gyumri: on the eve of the wedding, relatives from both families would gather bundles of food and, accompanied by musicians, songs, and dances, escort the bride and groom to the bathhouse. The bathhouse served as an ideal setting for part of the wedding celebrations. According to custom, after the bath, the Gyumri bride would drape a towel over her mother-in-law's shoulders, kiss her, and say, "Your bathhouse is sweet, dear mother."

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

15

Երեքշաբթի
Tuesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	Ու F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

«Լենինականում ներկայացում էինք բեմադրում: Մի ցածրահասակ տղա կար մեզ հետ: Կարծելով, թե նա կարող է միայն հուշարար լինել, նրան նստեցրինք բեմի տակ: Եվ ահա մենք՝ «ճանաչված արտիստներս», կոտրատվում ենք բեմի վրա: Հանկարծ այդ տղան բեմի տակից դուրս է թռչում և գոռում է. «Ապաշնորհներ, փնթիններ, ճիշտ չեք խաղում»: Գուրգեն Մահարի, հայ գրականության դասական: Այդ տղան Վարդան Աճեմյանն էր, Գյումրու դրամատիկական թատրոնի լեգենդար գլխավոր ռեժիսորը:

"We were staging a play at Leninakan. There was a short boy with us. Thinking that he could only be a reminder, we made him sit under the stage. And here we, the "recognized artists", are breaking down on stage. Suddenly that boy jumps out from under the stage and shouts: "You idiots, you scoundrels, you are not acting correctly." Gurgen Mahari, a classic of Armenian literature. That boy was Vardan Achemyan, the legendary chief director of the Yumri Drama Theater.



ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

16

Չորեքշաբթի
Wednesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Մհեր Մկրտչյանի կերպարը կարևոր տեղ է զբաղեցնում «Շիրակ» օդանավակայանի դեկորներում:

The image of Mher Mkrtchyan occupies an important place in the decorations of the “Shirak” airport.

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

17

Յինգշաբթի
Thursday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Յին քաղաք Կումայրիի շրջանն այն հազվագյուտ վայրերից է, որտեղ կարելի է ծանոթանալ 19-20-րդ դարերի ինքնատիպ հայկական ճարտարապետությանը: Այն մեկ այլ դարաշրջան է տեղափոխում, այնտեղ, որտեղ պատմական շենքերի կողքով, սալարկված փողոցներով սլանում էին ֆայտոնները:

The Old City, in Gyumri’s Kumayri district, is one of the rare places where visitors can immerse themselves in the distinctive Armenian architecture of the 19th and 20th centuries. Strolling through its streets is like stepping back in time, when horse-drawn carriages traveled past historic buildings along cobblestone roads.

Յին Գյումրու վերակերտվածք-մանրակերտը
Miniature of Old Gyumri

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

18

Ուրբաթ
Friday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Աբովյանը քաղաքի առաջին փողոցներից է, խորհրդանշում է նրա «ոսկեդարը»: Այն ԽՍՀՄ-ում հետիոտների համար նախատեսված առաջին փողոցն է և առաջիններից մեկը եվրոպայում: Այստեղ է Արևմտյան Ասիայի միակ թանգարանը, որը նվիրված է արվեստի ոլորտի կանանց, այստեղ են Հայաստանի առաջին կինոթատրոնը, քաղաքային դեղատոմը, տիկնիկային թատրոնը, ներառական սրճարանը, ռոք երաժշտության դպրոցը:

Abovyan Street is one of the city’s earliest and most iconic streets, symbolizing its “golden age.” It was the first pedestrian street in the USSR and among the first in Europe. Along this street, visitors can find the only museum in Western Asia dedicated to women in the arts, Armenia’s first cinema, the city pharmacy, the puppet theater, an inclusive café, and the rock music school.

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

19

Շաբաթ
Saturday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Մի անգամ Գյումրու երիտասարդները հավաքվեցին և մտածեցին. Գերմանիայում մի ժամանակ Բեռլինի պատ կար, Չինաստանն ունի Մեծ պարիսպ, Իսրայելում կա Ողբի պատ: Հայաստանում էլ պետք է երգիծապատ կանգնեցնե՞նք: Եվ ուրիշ որտե՞ղ կարելի է այն կառուցել, եթե ոչ հայկական հումորի մայրաքաղաքում:


Once, the youth of Gyumri gathered and reflected: Germany has the Berlin Wall, China has the Great Wall, and Israel has the Wailing Wall. Armenia should have its own Satire Wall—and where better to build it than in the capital of Armenian humor?

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

20

Կիրակի
Sunday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Անանիա Շիրակացի: Միայն անունը բավական է նրա ծագումը հասկանալու համար: Շիրակացին ապրել է 7-րդ դարում, և նրա՝ իրեն հայկական բնական գիտության հիմնադիրի փառքը հասել է մինչև մեր օրեր: Ասում են՝ նա կարողանում էր ոսկի ստանալ ջրից: Նրա թվաբանության դասագիրքը մաթեմատիկական կրթության ամենաին աշխատություններից է: Շիրակացին կազմել է «Երկրագնդի աշխարհագրական ատլասը» և համոզված է եղել, որ Երկիրը կլոր է:

Anania Shirakatsi. The name alone is enough to understand his origin. Shirakatsi lived in the 7th century, and his fame as the founder of ancient Armenian natural science has reached our days. They say he could extract gold from water. His arithmetic textbook is one of the oldest works of mathematical education. Shirakatsi compiled the “Geographical Atlas of the Globe” and was convinced that the Earth was round.

ՍԵՊՏԵՄԲԵՐ SEPTEMBER

21

Երկուշաբթի
Monday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Գյումրեցիները սիրում են անսովոր մականուններ տալ: Օրինակ՝ վարսավիր «Մեյմունը» (Կապիկ) իր մականունը ստացել է, երբ նրա տատը, նրան առաջին անգամ տեսնելով, բացականչել է. «Էս ի՞նչ մեյմուն է: Մի սիրուն երեխա չկամր»: «Դռել» (շաղափիչ) Ռաֆոն մանկուց պատերի մեջ անցքեր փորելու սովորություն ուներ: «Օրիորդ» Վարսենիկը սիրում էր զարդարվել: «Ճնշում» Սոնան բուժքույր էր:

People in Gyumri have a habit for giving unusual nicknames. For example, the hairdresser “Meimun” (Monkey) earned his name when his grandmother, seeing him for the first time, exclaimed, “What a little monkey! Isn’t there a cute child?” “Drel” (drill) Rafo had been digging holes in walls since childhood. “Miss” Varsenik loved to adorn herself, while “Pressure” Sona was known for her work as a nurse.



ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

22

Երեքշաբթի
Tuesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	Ու F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Հիշում եք «Հայկական ռադիոյի» կատակը, որ հայերը Գոգոլի բոլոր գործերի մեջ ամենաշատը սիրում են «Քիթը» վիպակը։ Վերջին տարիներին Գյումրիում զարգանում են բժշկական տուրիզմն ու պլաստիկ վիրաբուժությունը, և նորածն քթերի «հետևից» այստեղ գալիս են ոչ միայն սփյուռքահայերն ու օտարերկրացիները, այլև գյումրեցիները։ Տեղացի պլաստիկ վիրաբույժները կատակում են. «Մեզ մոտ՝ Գյումրիում, դեռ չկան միայն նրանք, ովքեր կցանկանային բերանը փոքրացնել»։

Do you remember the old joke from the “Armenian Radio” that Armenians love Gogol’s novella “The Nose” more than any of his other works? In recent years, Gyumri has seen a rise in medical tourism and plastic surgery. Not only people from the Diaspora and abroad, but also local residents come here “in search” of fashionable noses. Local plastic surgeons jokingly remark, “Here in Gyumri, the only ones who don’t exist yet are those who would want to make their mouth smaller.”



ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

23

Չորեքշաբթի
Wednesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Գյումրիում, ուր էլ գնաք, Միեր Մկրտչյանին կհանդիպեք՝ քանդակներում, գրաֆիտիի ձևով, մագնիսների վրա կամ նրա անունով գինու շշերին... Նա ամենուր ձեզ հետևելու է և աչքով է անելու։ Տեղացիներն էլ գլուխ կգովեն. «Այստեղ է Միերը վազել, երբ մանուկ էր, այստեղ է մագերը կտրել, այստեղ խաղացել է Սիրանո դը Բերժերակ»։

Wherever you go in Gyumri, you'll encounter Mher Mkrtychyan—in sculptures, graffiti, magnets, or even on wine bottles bearing his name. He seems to follow you everywhere, winking as you pass. The locals will proudly point him out, saying, "This is where Mher ran as a child, this is where he got his hair cut, this is where he played Cyrano de Bergerac."



ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

24


Հինգշաբթի
Thursday

Ե M	Ե T	Չ W	Հ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Անահիտ Աղաջանյանի անձնական արխիվից
From Anahit Aghajanyan's personal archive

Մեր Մկրտչյանը Հնդկաստանից
փղերի հուշանվեր-արձանիկներ էր
բերել: «Ես դրանք կողքի սեղանիկի
վրա եմ դնելու, որպեսզի հիշեցնեն ինձ՝
կա մեկը, որի քիթն իմից մեծ է»: Ասում
են, որ հենց քիթը նրան օգնեց կատարել
իր լավագույն թատերական դերերից
մեկը՝ Սիրանո դը Բերժերակը:

Mher Mkrtchyan brought back
souvenir elephant figurines from
India, saying, "I'll place them on the
side table to remind me that there's
someone whose nose is bigger than
mine." It is said that his distinctive
nose even helped him deliver one of
his finest theatrical performances,
Cyrano de Bergerac.



mkrtchyan.wordpress.com

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

25

Ուրբաթ
Friday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Թովմաս Թերզյանի առաջին հայկական պիեսը՝ «Սանդուխտը», Ալեքսանդրապոլում բեմադրվել է 1873-ին: Պատմում է քրիստոնեություն ընդունած առաջին հայ կնոջ մասին: Երաժշտությունը գրել է Տիգրան Չուխադյանը: Նա հավանաբար առաջին հայ կոմպոզիտորն է, որը բարձրագույն երաժշտական կրթություն է ստացել Եվրոպայում: Նրան անվանում էին «հայկական Վերդի»:



Thomas Terzian’s first Armenian play, “The Sandukht,” was staged in Alexandrapol in 1873. It tells the story of the first Armenian woman to convert to Christianity. The music was written by Tigran Chukhadjian. He was probably the first Armenian composer to receive a higher musical education in Europe. He was called the “Armenian Verdi.”

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

26

Շաբաթ
Saturday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Առաջին Հանրապետության սկաուտական շարժման առաջնորդներ Վահան Չերազը և Տիգրան Խոեյանը 1920-ի սեպտեմբերի 26-ին Երևանից մեկնեցին Ալեքսանդրապոլ: Նրանք իրենց հետ բերեցին ֆուտբոլային թիմ, որը պետք է խաղար Ալեքսանդրապոլի «Վարդան զորավար» թիմի դեմ: Խաղն անցկացվեց «Կալաչի Բոստ» դաշտում, Ալեքսանդրապոլի թիմը հաղթեց 1-0 հաշվով:

The leaders of the scout movement of the First Republic, Vahan Cheraz and Tigran Khoeyan, left Yerevan for Alexandrapol on September 26, 1920. They brought with them a football team that was to play against the Vardan Sorovar team of Alexandrapol. The game was held at the Kalachi Bost field, and the Alexandrapol team won 1-0.

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

27

Կիրակի
Sunday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



«Խոշոր շահում» ֆիլմի նկարահանման ժամանակ եղբորս ստիպում էի կրկին ու կրկին բարձրանալ վերամբարձ կռունկի խցիկը: Այդ պահին լիովին մոռացել էի, որ Միեըը պաթոլոգիկ վախենում էր բարձրությունից: Եվ երբ 20-րդ անգամ գոչեցի՝ «մոտոր», սկսեցին քարեր նետել վրաս: Տանիքին աշխատող բանվորներն էին փորձում իրենց սիրելիին այդպես պաշտպանել ինձնից: Այդ պահին հնարավոր չէր նրանց համոզել, որ մենք եղբայրներ ենք: Ալբերտ Մկրտչյան, Միեը Մկրտչյանի կրտսեր եղբայրը, կինոռեժիսոր, սցենարիստ, դերասան

“During the filming of “Big Win”, I kept forcing my brother to climb into the crane cabin, completely forgetting that Mher had a pathological fear of heights. By the twentieth time I shouted “Action”, the workers on the roof began throwing stones at me, trying to protect their beloved Mher. At that moment, it was impossible to convince them that we were brothers.”

—Albert Mkrtchyan, Mher Mkrtchyan’s younger brother, film director, screenwriter, actor

2026

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

28

Երկուշաբթի
Monday

Ե M	Ե T	Չ W	Յ T	Ու F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

«Անորսալի վրիժառուները» ֆիլմի
նկարահանումները, Էդմոնդ Քեոսայանը՝
դերասաններ Վլադիմիր Տրեշչալովի,
Բորիս Սիչկինի և Վիկտոր Կոսիխի հետ

Filming of "The Elusive Avengers": director
Edmond Keosayan with actors Vladimir
Treshchalov, Boris Sichkin, and Viktor Kosikh.



Լենինականում է ծնվել խորհրդային կինեմատոգրաֆի
ևս մեկ իսկա՝ հանրահայտ ռեժիսոր Էդմոնդ Քեոսայանը:
Նա «Անորսալի վրիժառուները» եռաֆիլմի, «Տղամարդիկ»,
«Լքված հեքիաթների կիրճը», «Երբ գալիս է սեպտեմբերը»,
«Հուստ աստղ» կուլտային ֆիլմերի ռեժիսորն է:

Another giant of Soviet cinema, the famous director
Edmond Keosayan, was born in Leninakan. He is the
director of the trilogy "The Elusive Avengers", the cult
films "The Men", "The Canyon of Abandoned Tales",
"When September Comes", and "Star of Hope".

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER

29

Երեքշաբթի
Tuesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				



Տաքսիստ ընկերների մասին երկար-բարակ պատմելու փոխարեն ավելի լավ է նրանց նվիրված ֆիլմ նկարել: Ռեժիսոր Էդմոնդ Քեոսայանն այդպես էլ արեց՝ 1972-ին նկարահանելով «Տղամարդիկ» ֆիլմը: Չորս հերոսներին նվիրված արձանախումբը Երևանում կանգնեցվեց 2006-ին՝ ռեժիսորի 70 և էկրանավորման 35-ամյակի առթիվ:

Instead of telling a long story about taxi driver friends, it would be better to make a film dedicated to them. Director Edmond Keosayan did just that, making the film "The Men" in 1972. A monument dedicated to the four heroes was erected in Yerevan in 2006, on the occasion of the director's 70th birthday and the 35th anniversary of the film's release.

ՍԵՊՏԵՄԲԵՐ
SEPTEMBER


30

Չորեքշաբթի
Wednesday

Ե M	Ե T	Չ W	Յ T	ՈՒ F	Շ S	Կ S
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

«Որբերի քաղաք», հազարավոր որբեր՝
Ալեքսանդրապոլում գտնվող Սբ. Արսենի
եկեղեցուն հարող տարածքում

“Orphan City”: Thousands of orphans in the
area surrounding the Church of St. Arseny
in Alexandrapol



Աշխարհի ամենամեծ որբանոցը հիմնադրվել է
1919-ին, Ալեքսանդրապոլում: Այն ապաստան է տվել
Ցեղասպանությունից փրկված ավելի քան 31,000 հայ
երեխայի: «Այդ որբերը դարձան Հայաստանի ողնաշարը:
Այս երեխաները, որոնց հետ հանդիպել է Վահան Տերյանը,
ապրում են մինչև օրս: Նրանք դարձան պետություն,
մշակույթ, հոգեբանություն»:
Գևորգ Էմին-Տերյան, «Վահան Տերյանի անհայտ
նախածնունդությունը»

The world’s largest orphanage was founded in 1919
in Alexandrapol. It has sheltered more than 31,000
Armenian children who survived the Genocide.
“Those orphans became the backbone of Armenia.
These children, whom Vahan Teryan met, are
still alive today. They became a state, a culture, a
psychology...” Gevorg Emin-Teryan, “The Unknown
Initiative of Vahan Teryan.”